կէին ամուսնութեանը. ուստի զինքը համո-
զելու համար ըսին թէ աղջիկը զինքը չի սիրեր:

— Չեմ հաւատար, գոչեց երիտասարդը՝
անկեղծ յախճաղութեամբ մը, կրնաք ըսել
թէ ես զինքը չեմ սիրեր այնքան՝ որքան նա
զիս կը սիրէ...:

Այդ խոստովանութենէն վերջ շատ ա-
ռիթներ ունեցայ համոզուելու, թէ երիտա-
սարդին զգացածը՝ պարզապէս եմքն զրգ-
ուանքն էր, աղջկան զինքը սիրելէն յառաջ
եկած:

Մեր չորս կողմը կը վիտան օրինակները,
որոնք ամենքն ալ կը հաստատեն թէ՛ այդ
խոհալ սիրով չեն սիրեր ընդհանրապէս մար-
դիկ. և նոյն խի կան կարծածէն աւելի
շատեր ալ՝ որոնք անկարող են զգալու. ո-
րովհետեւ այդ սէրը որոշ կապով մը համար
միայն գոյութիւն ունի. տեսակ մը ջղայնու-
թեան արդիւնք, զոր բաւական բացատրած
են ջղերով զբաղող վերջին գիտունները: Եւ
այս՝ դուրսէն, բարութեան կամ վերջապէս
բոլոր այն բաներուն պէս, որոնք ընկերային
բարոյականին հիմը կը կազմեն, չէ կարելի
ստացուիլ համոզումով. որովհետեւ բոլորովին
անկախ է ան՝ կամքէ և խնայականութենէ.
տպառնութիւն մըն է պարզապէս, ու զի-
տենք որ տպառնութեանց գոյութիւնը և
կամ անորճանը ենթակառուրէն բնութենէն
կախում ունի:

Իսկ դառով իւր «վարդապետան ատայ»-նե-
րուն, շատ լաւ ցոյց տուեր էր թէ՛ միամիտ
ձեռնարկութիւններ են ատոնք. անշուշտ
միամիտ ձեռնարկութիւններ, աղա թէ ոչ
պիտի փորձուիմ կարծել թէ՛ զիրքեր կան,
որոնք յաղաւում կէտեր ունին իրենց մէջ
և որոնցմէ թօլթօլ ունեցած է հատ մը, իւր

«կրկնյերեան Սոնատ»ը գրած պահուն:

Մհա, բարեկամ, այս երկու կէտերն են
որոնց երկու տարի առաջ ալ չէի կրցած հա-
մոզել, ինչպէս և այսօր: Բայց բոլոր այն
տխուր, սեւ երեւոյթները, զորոնք նշմարած
է ամուսնութենէ՝ առաջ և ամուսնութենէ
վերջ, մարդու մը և կնկան մը կեանքին մէջ,
այնքան ճանարիտ են և հասարակ, և զորոնք
այնքան լաւ պատկերացուցած է՝ իրենց յի-
ստին ստուերներովն իսկ, և զանոնք զրեթէ
ամբողջովին մեզ ցոյց տուած, որ ոչինչ ու-
նիմ խօսելու. ու կը խնդրեմ որ թողուս զիս
այսօր ևս, այս մասին հիմապէս թողթօլ ոյի
հանձարին վրայ:

* * *

Կը հարցնես գարձեալ թէ՛ ի՞նչ կը խոր-
հիմ այն նպատակին վրայ, որ թելադրած է
Ստեփանէ վարդապետը, այդ զրքին թարգ-
մանութիւնը ընծայելու մեր աղջկին:

Գրեթէ ոչինչ:

Իւր յառաջարանը չը կարդացիր:

«Սորա մէջ աւետարանական վարդապե-
տութիւն կայ»:

Ուստի,

«Հարկաւոր է ոչ միայն լսել, հապա և
կատարել նորա խօսքը, համաձայն տաքե-
լական պատուէրին...»:


Եւ յետոյ

«Թուրքարնակ Հայ ընթերցողները սիրեն
ընտելանալ Հայկական արեւելեան լեզուին և
գրականութեան...»:

Երբ Ստեփանէ վարդապետին փիճակը չէ
այն, զոր կ'ունենայ տղայ մը՝ «տրափէ» դե-
ղահատ մը շաքար կարծելով, այն ատեն բո-
լորովին տարբեր բան մը եղած ըլլալու է
նոյստակը, պարզապէս թուլթույն «նեքիտյա-
ցրել» մեզ. ու յայտնի է թէ՛ մեծ հեղինա-
կութիւններու մէջ, հեղինակն է որ թարգ-
մանիչը կը ներկայացնէ:

Բայց երբ խնդիր կ'ըլլայ թէ՛ մեր մէջ օգ-
տակար է թէ՛ չէ «կրկնյերեան Սոնատ»ին
թարգմանութիւնը, չիտակը չեմ կրնար երկ-
րորդ պարագային համար որոշ պատասխան
մը տալ, միայն կը խորհիմ թէ՛ նորութեան

պիտի կարգուէին, դեռ աս գործը շատ ջուր
կը վերցնէր. ուստի երբոր Մըկըրին մօրը,
Մարգրիտին՝ աս ամենքը ըսաւ, Մարգրիտ
բէշը մէջքը խոթեց և խօսք տուաւ որ Սուրբ
Սարգիսին ալ որ չըլլար՝ Անճարակին աշխարհի
մէջ երկու ընտանիք ալ պիտի աւելնային:



ԱՆՃԱՐԱԿԻՆ ՀԱՐԱՆԵՒՈՐՆԵՐԸ

Սուրբ Սարգիս մօտեցեր էր. Չըխաղընի
մէջ երկու երեք տեղ հարմիր բռնուած էր,
ամեն զի ողեւորութիւն կար: Չկնորսի պզտիկ
աղջիկներ գրան առջին նոյնը կ'աւանդէին.
«Սուրբ Սարգիս, բռնէ գօտիս, չեղայ հողիս,
ես աս գիշեր երազ տեսայ, տաք տաք հոցի
հոտեր եկաւ, ելի նայէ ո՞վ եկաւ, երեք ձի-
աւոր եկաւ, լուսնիկ լուս վերն ինկայ, լու-
սինը բռնենիքէն ծովն ինկայ, Սուրբ Սար-
գիս, բռնէ գօտիս, չեղայ հողիս»: Իսկ զի-
շերները կերակուրէն ետքը պզտիկ տղաք ծաղ-
ուցուելով, «Միտոր ծեծեմ բաշային, Երա-
նիկին հարմիրքին, էս պարոնին տղան եմ,
թագաւորին փեսան էմ» ըսելով զիշերները
կը լուսցնէին: Ս. Սարգիսն ալ եկաւ անցաւ,
Անճարակին մատ մը միայն, Երնէկ կարգուող-
ներուն, էթէ Անճարակին ալ փախցնէին՝ ա-

մեն բան Չատիկէն ետքին կը մնար: Աղէկ որ
Մարգրիտ և Լուսիա ձեւքերնին շատ կնիկներ
էին և առնին Օղբերը Գուճարուէն Չըխ-
աղըն բերեր էին. դառով Պետոն՝ անոր խըր-
ճիթը Գոհարինէն երկու գուճ վեր էր: Բայց
որոնք պիտի ըլլային հարմեւորները, ո՞վ
պիտի բռնէր փեսերուն խաչը: Փեսերուն
խաչը ամիրային կողմէն բռնող Սերջօն զըտ-
նուեցաւ. իսկ դառով հարմեւորներուն, բո-
լոր Չըխաղըն միտքը գրած էր ներկայ զըտ-
նուի. ասոր վրայ աւելցուր երկու օտարա-
կաններ որ Արեւելքի հարմիր տեսնել կ'ու-
զէին: Է՛հ, ձկնորսներու հարմիրք՝ Արեւելք-
ցիկ հարմիրք էր. իրաւ որ բան մը պակաս
պիտի չըլլար, բայց երկրին բարձր գերդաս-
տաններու ան առնուած հարմիրներու շուքը
ու մեծ վայելչութիւնը հոն կրնային աւանդ-
լինչ էր նպատակին. սակից ալ գատ՝ երբոր
Տ. Գէորգ հայրը ասոնց խօսքը բացաւ, Մար-
գրիտ բոլոր ուժովը զէմ կեցաւ:

— Վո՛ւյ, կրողը տանի աս օտարները. ի՞նչ
ձուռն պիտի դայ գլխուս, Աստուածդ կը սի-
րես տըւոնց խօսքը մի՛ ընէր Տէրպապա:

— Անոնք աղէկ մարդիկներ են, օրհնած,
մեր աղէկութիւնը կ'ուզեն որ դուռն չես գի-
տէր:

— Ի՞նչը պիտի գիտնամ չը գիտնամ, ա-

ղէկ մարդիկ օր ըլլան՝ տեղերնուն չեն էլլար
հոս կար. ան ի՞նչ է՝ պրեքիներն կ'ունեն
պիկ էն դարձեր. քանիի կ'առնեմ անանի է-
րիկ մարդը էս՝ ճովաթիս մէջ կը խըխթեմ:

— Ըսէ՛ և տեսար անոնք:

— Տեսնալն ալ խօսք է քի, անցած օր
Ս. յաղմային լեռն ի վեր կ'ըլլային աչքերնին
տուներն ի վեր. գողի պէս չորաղին աչքէ
կ'անցունէին. է՛հ չկրնամ ինչերնի՞ս պիտոր
դողման, բանիկ մը չունինք. մարդ օր պիտոր
դողման՝ ասոր ըսելիք չունիմ:

— Հա՛ մարիկ հա՛, ատոնք մարդորս են:

— Աղէ՛կ ա, մարդ պիտոր որտան նէ Չըխ-
աղըն չի գան, աս տեղ կրցնայիք մարդ չեն
գտնար, կը խնին ալ փորձանք կու գայ:

— Աղէ՛կ, ըսաւ քիթին տակէն Տ. Գէորգ,
աս ծիկ երես մարդիկներուն ի՞նչ ընելու է.
վարքերնին խօսքերնուն բնաւ չի նմանիր.
ես եմ ըսողը՝ խաչը ծոցէն կը հանէ. խօսք
տուին որ՝ անանց մեր ընկերակցութեան,
մեր ժողովուրդին մէջ չի մտնան ելլեն. Մը-
կըր կ'ըսէ որ Գուճարուի դուրսը զանոնք
տեսած է. մարդ կ'ըսէ որ Չըխաղըն զանոնք
տեսած է. բարեբաղդաբար մեր ռամիկն ա-
ւելի կրօնասէր է. տեսնենք ասոր ետքը ո՞ր
պիտի երթայ:

(Շարունակ)

մը խոստովուի տալանդութիւնը պիտի ընէ անիկայ. թէպէտ քիչ մը յուզումով լեցուն, բայց անհետեւանք. որովհետեւ էն հասարակ դատողութիւնն իսկ՝ կրնայ ըմբռնել այդ խոսէպիւն անբնականութիւնը: Իսկ օգտակարութեան մասին, «Կրէյցէրեան Սօնատ»ը տեղեր ունի իւր մէջ, սրտնք պէտք է արդարեւ որ ուշադրութիւն դրաւեն. և սակայն կրնայ յինք այդ գիրքը քսան տարի վերջը կարգաւ, զի ա՛յնքան պէտք ունինք հիմա վերածնելու ուրիշ աւելի կարեւոր գործեր:

Ա. ՍԻՄՍՆ

Ա.Ռ.ՈՂՋԱ.ՊԱ.ՀԱ.ԿԱՆ

Լ Ո Պ Ա Ն Ք

Ջրոյ ջերմութեան համեմատ, երեք տեսակ լողանք կայ. 1. Պաղ լողանք, որոյ ջերմութեան աստիճանը քսանէ վեր է. 2. Գաղ լողանք, որոյ ջերմութեան աստիճանը 20-32 է. 3. Տաք լողանք, որոյ ջերմութիւնը 32էն վեր է:

Բայց այս բաժանումները տարբեր երկրներու մէջ կը փոխուին կլիմայի համեմատ. օրինակի համար, Ալքիեալ-Գօտիի կլիմայից ժողովրդեան համար 32 աստիճան ջերմ լողանքը պաղ կը համարուի:

Պաղ լողանքը մարմնոյն ընդհանուր ջերմութիւնը կը մեղմէ, և մարմնի արտածութիւնը նուազեցնելով՝ ոյժ կու տայ մարդու: Բայց այս արդիւնքը յառաջ դառու համար հարկ է որ ջուրը մտնող մարդը լողալու ատեն տեղի ունեցած չարժանաց նման չարժաններ կատարէ: Որովհետեւ հակառակ պարագային, բաղկերակի զարկը կը նուազի և կենդանական գործողութեանց մէջ թուլութիւն մը յառաջ կու գայ, որ ջրային դրութեան գործողութեանց հանդարտութիւն կը պատճառէ:

Երբ մէկը քրտնած մարմնով պաղ ջուրը մտնէ, այն ատեն ցրտութենէն ազդուելով մարմնոյ արտաքին մասերուն մէջ գտնուած արիւնը անսկզբապէս ներքին անդամներուն մէջ խոյս կու տայ: Երբեմն այս հոսումը տասուկապէս պատահելուն՝ բորբոքում և լուծողութեան հիւանդութիւններ յառաջ կը բերէ: Պաղ լողանքը ներքին չէ շնչառական գործարաններու հիւանդութիւն ունեցողներու համար. որովհետեւ ասիկա մարմնոյ ոյժ և ջրային դրութեան հանդարտութիւն պատճառելու համար է միայն:

Գաղ լողանքի ազդեցութիւնը թէ՛ ջրային դրութեան և թէ՛ ուրիշ մի քանի գործարաններու վրայ հանդարտեցուցիչ կամ մեղմացուցիչ է:

Տաք լողանքի ազդեցութիւնը սա է որ, մարմնոյն ջերմութիւնը կ'աւելցնէ, և այս ջերմութիւնը ընդհանրապէս կը ծաւալի ներքին գործարաններու մէջ: Տաք լողանքը թոքերու և մարմնի արտածութիւնը շատցնելով զանազան գործարաններ կը գրգռէ: Ուրեմն եթէ այս լողանքը քիչ մ'ատեն տեւէ, սաստիկ գրգռիչ է: Բայց եթէ երկար տեւէ, այն ատեն թոքերուն և ուղեղին մէջ արեան հաւաքուելուն պատճառ կ'ըլլայ:

Լողանքի ատեն տեղի ունեցած ազդեցութիւնն ու հակազդեցութիւնը (action et réaction) մեծապէս արժանի է ուշադրութեան: Երբ մարդ ջուրը մտնէ, արիւնը մարմնոյն ամեն կողմերէն դէպի կեղրոն, մշտնջեն

ատամնոքի և ուրիշ անդամներու վրայ կը յարձակի, ահա ասոր կ'ըսուի ազդեցութիւն. յետոյ ներքին անդամներէն մարմնոյն դրսի անդամներուն կը յարձակի, և ասոր կ'ըսուի հակազդեցութիւն:

Եթէ այս երկու հակառակ յատկութիւնք ըստ արժանւոյն տեղի ունենան, այն ատեն մարմինը կ'օգտի լողանքէն. բայց հակառակ պարագային մէջ կը փնտառուի: Որովհետեւ վերջին պարագային մէջ արիւնը ուղեղի, ստամոքսի և ներքին գործարաններու մէջ պէտք եղածէն աւելի հաւաքուելուն համար, ուղեղի և ստամոքսի զանազան ախտեր յառաջ կը բերէ:

Լողանքի փնտառար կորմերը. —Այս մասին կատարուած փորձերուն նայելով, լողանքի ազդեցութիւնը ամեն անձի համար մի և նոյն չէ, այլ կը փոխուի ըստ կազմուածքի, խառնուածքի և տարիքի. օրինակի համար, տառնեւմէկ տարու երկու տղաք՝ տաք բաղնիքի մէջ մեռած են. տաք բաղնիքի մէջ այս կերպով պատահած մահը արիւնահոսութեան կը վերագրուի ընդհանրապէս: Թէպէտ և այս տեսակ դէպքեր հազուադէպ են, բայց անձնական յարմարութիւն, ծերութիւն և խառնուածք, մանաւանդ արիւնային խառնուածք իրենց մասնաւոր ազդեցութիւնն ունին:

Պաղ լողանքէ մահ կը պատահի՞ արդեօք. —Լողանքի ատեն պաղ ջրին՝ մարմնոյն շուրջը գտնուած ջրերուն վրայ ի գործ դրած ազդեցութենէն՝ ուղեղին և ողնայարին մէջ անդամալուծութիւն կրնայ յառաջ գալ, և ասոր պատճառն ալ վերը յիշուածին պէս ըլլալուն, կրնայ մահ պատահիլ:

Պէ՞տք է որ կիներն ալ պաղ լողանք կատարեն. —Ինչպէս որ մարմնամարդը կանայց մէջ ընդհանրացած և օգուտը տեսնուած է, նոյնպէս ևս պաղ լողանք կրնան օգտակար ըլլալ: Բայց հազուադէպ կերպով տեսնուած է կանայց մէջ, թէ պաղ ջուրը ազդելով իրենց ջիւղերուն՝ կարմրախտի բիծերուն նման բիծեր երեւան բերած է իրենց մարմին վրայ: Անուրանայի է այն մեծ օգուտը, որով ջրային խառնուածքի տէր կանայք կ'ստանան պաղ լողանքէ:

Ծովային բաղնիք. —Այս կարգի լողանքը երկու կերպով կրնայ օգտակար ըլլալ: Ա. Ջրոյ մէջ մարմնոյն կատարած չարժանաց և ջրային ծփանաց ազդեցութեամբ: Բ. Ծովային ջրոյ մէջ գտնուած աղերուն մարմնոյն վրայ ըրած ազդեցութեամբ: Այս կարգի լողանք՝ աւելային խառնուածք ունեցող և գժուարամարտութեան ենթակայ եղող անձանց յանձնարարելի են:

Ծովային լողանքի տեւողութիւնը ի սկզբուն հինգ և հետզհետէ մինչեւ տասնեւհինգ վայրկեան կրնայ երկարաձգուիլ: Երկար ատեն ջրոյ մէջ մնալով մարմնոյն կտրտուուր և անդամներուն թուլութիւն կու տայ, որ կրնայ ի վերջոյ փնտառար ըլլալ. հետեւաբար պէտք է նախ քիչ մ'ատեն մնալ:

Ծովային բաղնիքէ յառաջ եկած օգուտները ի նկատի առնելով, Բարիլ քաղաքին թաղապետութիւնը Սէն դեմիտի եղերքը շատ մը բաղնիքներ շինել տուած է, ուր աղքատք ծրարար, և գործաւոր դասը շատ փոքր գնով մը կ'ընդունուին:

Արեւելեան երկիրներու բաղնիքները. —Թէեւ կարօտ տակաւին բարեւոյն — ընդհանրապէս յարմար են առողջապահական տեսակէտով: Տաք բաղնիքներու համար ուշադրութեան անհրաժեշտ գլխաւոր կէտերն են,

ջրոյ անուշութիւնը, օդի հոսանքէն պատրաստութիւնը, բաղնիքէն դուրս շինելը, երբ մարմինը խոնաւ է տակաւին. ու բաղնիքէն ելնելէ վերջ, մինչեւ քանի մը ժամ գործով չզբաղիլը: Բաղնիքի մէջ կատարուած մարմնոյ շրջափոխը առողջապահական կանոն մ'է. որովհետեւ բաղնիք մտնելու և ելնելու ատեն, արիւնը՝ միշտ պատրաստ է մարմնոյն մէկ կողմը քաշուելու. բան մը՝ որ փնտառար է և առաջը կ'առնուի մարմինը շինելով: Կուշտ եղած ատեն պէտք չէ լուացուիլ և լուացուելէ ետք՝ մարմինը հովն պահպանելու է, լաթ փոխելու տեղը երեք քառորդ ժամ, առտուաւն մէկուկէս ժամ միայն մնալու է, և տուն վերադառնալու ատեն կամայ քաղելու է. եթէ այս կէտերուն ուշադրութիւն չըլլալի, կրնայ ըլլալ որ սոյ և այլ հիւանդութիւնք յառաջ գան:

Ռուսական բաղնիքներ. —Ասոնք Ռուսոյ յատուկ և նոյն երկրին ժողովրդեան վիճակին համաձայն են: Այս կարգի բաղնիքներու մէջ նախ տաք տեղ մը կը մտնուի, ուր մարդ պէտք եղածին պէս կը քրտնի, յետոյ պաղ ջուր կը թափեն մարմնոյն վրայ, որպէս զի քրտնիքի և տաքութեան մէկ մասը երթայ: Եւ ասիկ ետքն ալ դարձեալ մարմինը տաքցնելու և կորուսած աւելորդ ջերմութիւնը վերստին տալու համար զափնիքի տերեւներ կրող կարգ մը զատաղաններով մարմնոյն զանազան մասերուն կը զարնեն. կամ ուրիշ բացատրութեամբ, որպէս զի հակազդեցութեան կանոնաւոր կերպով յառաջ գայ՝ չփոփ կը կատարեն:

Առողջապահական կանոն. —Առողջապահութիւնը մանկանց համար գաղջ ջրով լողանք կը յանձնարարէ. նոյնպէս կանանց՝ զաչտանի տեղի ունենալուն համար՝ տաք լողանք, և զայն զիւրացնելու համար պաղ լողանք կը յանձնարարէ:

Ջրային խառնուածքի տէր անձանց պաղ կամ գաղջ լողանք օգտակար է: Շնչառական հիւանդութիւններէ զատ, բոլոր այն անձներ, որք ապաքինման ճամբուն մէջ են, և դործաւորք՝ որ կ'աշխատին ագիլ, ծխախոտի և կապարի գործարաններու մէջ, շատ պէտք ունին լողանքի:

ԱՐԵՍԻՐ

ԾԱՂԻԿԻ ԼՈՒՐՆԵՐԸ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Պատրիարքական Փոխանորդ Տ. Գարբիէլ Ծ. Վ. ճէվահիրեան, որ ժամանակէ մը ի վեր հիւանդ էր, սպարինած ըլլալով անցեալ չաբաթ օր Պատրիարքարան եկաւ և նոյն իրիկուն Պէօյիւրաթէ գնաց, ուր քանի մը օր պիտի մնայ օգտիսիսութեան համար:

—Այդ ատեն Տ. Խորէն Սրբողոյնի Պատրիարքութենէ հրաժարելուն վրայ՝ կը լսենք թէ խառն ժողով պիտի գումարուի Պատր. Տեղապահի մը ընտրութեան համար:

—Երէկ, Ս. Յովհաննու Կարապետի ծննդեան տօնին առթիւ Հռոմէական Հայոց Պատրիարք Տ. Աղաբեան Սրբազանը պատարադ մատուց Վալարթի Յիսուս Փրկիչ եկեղեցւոյն մէջ, և յետ պա-

տարողի հոգեհանգստեան պաշտօն կատարեց Պրանտայի հանրապետութեան նախագահ Պ. Գառնոյի համար, ի ներկայութեան Պրանտայի Դեպուտատներն և գեղարարական պաշտօններուն:

— Ստալին Բարսեղ Էֆ. Ղազարոսեան, ինչպէս ամեն տարի, նոյնպէս և այս տարի բարեհաճած է մարդասիրաբար նորոգել Ազգ. Հիւանդանոցի բոլոր սոպաները:

— Սրբազան առաջնակարգ վաճառականներէն Սահան Էֆ. Չուգասարեան տարեկան մը «Ճաղիկ» նուիրած է նոյն քաղաքի Որբանոցի վարժարանին:

Առաջին թիւէն սկսեալ թերթերը կը զրկենք այս շարժու. այդ հասցէին:

— Հրատարակուեցաւ «Մասիս»-ի 4րդ թիւը:

Ն Ե Ր Ք Ի Ն

Սերպիոյ Ալեքսանտր Թադաւորը հինգշաբթի այցելեց թորգաբուի պալատը, Կայս. թանգարանն ու գանձարանը: Ուրախ օր ներկայ գտնուեցաւ Ալեքսանտրի հանդէսին և կատարուած զօրահանգէսին: Յետոյ զնաց նշան թաղ ի վախճարձ այցելութիւն Մեծ-Եղարարին: Եղիպտոսի Ստիվր Կայսերական Պալատ կրթարար այցելութիւն տուաւ Ալեքսանտր Թադաւորին: Շարժութ օր Ալեքսանտր Թադաւորը փոխադարձ այցելութեան զնաց նորին Բարձրագոյնութեան, և նոյն օր ընդունեց բոլոր նախարարներու ու բարձրաստիճան պաշտօնատարներու այցելութիւնը: Յունաց Ամեն. Պատրիարքը շարժութ օր Կայս. Պալատ զնաց և այցելութիւն տուաւ Վեհ. Ալեքսանտր Թադաւորին: Կիրակի օր Վեհ. Թադաւորը Ֆինիքի Յունաց Պատրիարքարանի եկեղեցւոյն մէջ ներկայ գտնուեցաւ Տ. Նիսիֆիլի մատուցած հանգիստաւ պատարագին: Տ. Նիսիֆիլի Սրբազան եկեղեցական թանկագին պատկեր մը նուիրեց Սերպիոյ Թադաւորին: Ալեքսանտր Թադաւորը նոյն օր զնաց Պիլլերայի Կայս. Պալատը և Նիսիքէյ ուր այցելութիւն տուաւ Բայիֆ փաշայի: Երկուշաբթի այցելեց Տալապաղէյի պալատը, Թէրանէն ու ցամաքային երկրաշտիական վարժարանը: Նոյն օր ընդունեց մայրաքաղաքի բոլոր Դեպուտատներու այցելութիւնները: Ալեքսանտր Թադաւորը 15000 ֆր. (660 ոսկի) նուէր զրկած է Յունաց Պատրիարքարանին: Տ. Նիսիֆիլի Սրբազան երեքշաբթի օր այցելութիւն տալով, Նորին Վեհափառութեան շնորհակալութիւն յայտնած է այս նուէրին և իրեն տուած պատուանշանին համար: Երեքշաբթի օր Ալեքսանտր Թադաւորը Մեծ-Շուկայ զնաց և քանի մը զնումներ բրաւ հոն: Վերջը զնաց այցելել Սուլթանիէի և Բանկայի վիմաւորական վարժարանները: Պաշտոնաբար. Քեղարարանի կողմի: Զորեքշաբթի օր մեկնեցաւ Վեհ. Թադաւորը զէպի Սէլանիկ:

Ալեքսանտր Թադաւորը իր լուսանկարը նուիրած է Մեծ-Եղարարին և Արտաքին գործոց Նախարարին: Թադաւորը պատուանշանին Մեծ-Ստան ալ տուած է Ոստիկանութեան Նախարարին և Կայս. Պ. լատան արարողական Միւնիսթր փաշային:

Նորին Վեհափառութիւնը 5000 ֆրանք ձգած է մայրաքաղաքի աղքատներուն:

Սերպիոյ արքայահայրը՝ Միլան, հեռա-

գրաւ շնորհակալութիւն յայտնելու Վեհ. Սուլթանին, իր զաւակին Էղած քանչիւի հիւրընկալութեան համար:

— Վեհ. Սուլթանը իմիջապէս պատուանշանի արժաթ չքաղարար շնորհած է Ալեքսանտր Թադաւորին մէկ քանի հաւեւորներուն:

— Հինգշաբթի օր սկսաւ Մուհարրէմ ամիսը որ արարական 1312 թուականին տարեգրութիւն է:

Բոլոր նախարարներն ու բարձրաստիճան պաշտօնատարները Կայս. Պալատ զացին իրենց շնորհակալութիւնները մատուցանելու:

— Երկու օրուան մէջ Օսմ. Պանքայի վճարած 40 000 ոսկիի պանքատներու մէջէն երեք կեղծ գրաւաթղթեր ելած են: Ոստիկանութիւնը Թափառնէի մէջ ձերբակալած է Սաղաթի Անտոն անուն մարդ մը, որ հինգ ոսկինոց պանքատն մը կը քշէր:

— Յունաստանի թագուհին, Մառի իշխանուհին և Անտրէ իշխանին հետ ուրախ առաւօտ Վոսիպիւն անցաւ. ուրիշ Սեփաստբոլ կ'երթայ:

— Վեհ. Սուլթանի կողմէ փարիզի Օսմ. դեսպանը այցելելով Նոր Նախարարապետ Պ. Շարլ Տիւրբիլի, Պ. Հանթրի և Տիլին Գառնոյի ցաւակցութիւն յայտնելու Պ. Գառնոյի մահուան համար:

Տիլին Գառնո խնդրեր է Դեպուտատն իր շնորհակալութիւնն յայտնել Վեհ. Սուլթանին:

— Փարիզի Օսմ. դեսպանը Մարտիկայէն ճամբայ ելեր է մայրաքաղաքս գալու համար:

— Հինգշաբթի օր սկսաւ հրատարակուել թուրքերէն «Բզտամ» լրագիրը, որուն արտօնութիւնն առած էր ձէվաթէ Էֆէնդի:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Անգլիոյ թագուհւոյն թուր, Եղբի զուգարան կ'ինը մանչ զաւակ մը ծնաւ: Երբորդ աստիճանի այս զահաժառանգին ծնունդը բերկրութեամբ լցուց բոլոր Անգլիացիներու սրտերը:

Վերթնորա թագուհւոյն այժմ ունի եօթն զաւակ, 28 թու. և 13 թուանորդի:

— Միացեալ Նահանգներու Նախագահը Սորհրդարանին մէջ ըսած է թէ՝ «Պ. Գառնոյի մահը ազէտ մըն է մարդկութեան համար»:

— Իտալիոյ նախարարապետ Պ. Բրիտի թէ Իտալական դեսպանին միջոցաւ և թէ Սորհրդարանին մէջ իր ցաւակցութիւնն յայտնեց հանգուցեալ Գառնոյի մահուանն առթիւ:

— Եւրոպայի գրեթէ բոլոր վեհապետները թէ՛ հեռագրներով և թէ՛ իրենց Պրանտայի դեսպաններուն միջոցաւ խորին ցաւակցութիւն յայտնեցին հանգուցեալ Գառնոյի ազգասիրի մահուանն առթիւ:

— Ճափոնէն, Չինէն և Ասիայի գանապան կողմերէն ալ վշտակցութիւն յայտնող հեռագիրներ կը տեղան ի Թրանսա:

— Յուլիս լին փարիզի մէջ կատարուեցաւ հանգուցեալ Գառնոյի յուղարկութեան հանդէսը: Գաղաղին կը հետեւին իր ընտանիքը, նախագահ Բէրիէ, օտար դեսպաններն և այլն: Նոյր-Տամի մայր եկեղեցւոյն մէջ եկեղեցական արարողութիւններ եղան ու թափօրը ուղղուեցաւ զէպի Բանիէն, ուր ճառարարարանեցին Պ. Շ. Տիւրբիլի, Պ. Շալմէլ Լաքու և Երեսփոխանական ժողովոյ կողմէ Պ. Մահէ:

— Մարաբեան ցեղերն հնազանդած են Նոր Էմիրին, ի բաց առեալ Ռիֆի ցեղերն որք Սպանիոյ զէմ գործել կը ձեռնարկեն:

ՁԱՆԱԶԱՆ ԴԷՊՐԵՐ

Անցեալ ուրբաթ զիշեր ժամը Յին Գարա-կէօմիսիկի Ալիմայի փողոցի գիշերապահը իր սովորական պաշտօն ըրած առին կը հանդիպի չորս անձանցներու, որոնք զինքը տեսածնուն պէս՝ իրենց ձեռքը զանաւած խոշոր պարկը հոն ձգելով կ'ընկնէ կը զնեն: Գիշերապահը զիրենք բաւական տեղ հալածելէ ետքը, ետ կը դառնայ և պարկին քով դառնալէր կը բանայ զայն սարսափահար կ'ըլլայ, կ'նկան մը մարմինը տեսնելով մէջը:

Անմիջապէս մօտակայ ոստիկանութեան լուր կու տայ, որ յետ քննութեան կը տեղեկանայ թէ՛ խեղճ կ'ինը վզէն խոզուած է:

Ոճրագործութեան շարժառիթը զողորթիւն ըլլալ կը կարծուի. որովհետեւ խեղդամահ կ'ընծ վրայ չեն գտնուած հինգ ոսկինոց մը, օղ մը և մատնի մը, զորս միշտ վրան կրելու սովորութիւն ունի եղբր:

— Երեքշաբթի օրուան «Թարիգ»-ին մէջ հետեւեալ կը կարդանք.

«Սկիւտարի Էպո Պաղարը թաղի բնակիչներէն Սէմէրճի Յովսէփ աղայի աղջկը, Օր. Վասիլաքի որ կէտիք-Փաշայի կողմը, Տիգրան Միրիճանեանի տնօրինութեան ներքեւ գլուխուղ վարժարանին մէջ ուսուցչի պաշտօն կը վարէր, ասիէ առաջ՝ զինքը կ'նստէր առնելու խոտմամբ՝ պղծուել է յիշեալ Տիգրանի կողմէ: Բանէ մը տեղեկացնող Յովսէփ աղային գաղով՝ ասիկա, հինգ շաբաթ առաջ աղջկը ետքովայն մէջ դերձակութիւն ընող Արթիւրին նշանած ըլլալուն՝ խեղճ աղջկը, չուղելով որ երիտաւորական անսիրտութեամբ գործած սխալը մէջտեղ կ'ընէ, կ'աղաչէ Տիգրանի կ'նստէր առնել զինքը, ինչպէս որ խոտմացած էր. բայց տեսնելով որ այս վերջինը կարեւորութիւն չտար իր աղաչանքին, պատիւը պաշտպանելու միջոցը անձնապաշտութեան մէջ կը գտնէ:»

ԱՐԺԷՔ ԴՐԱՄՈՑ

Օսմ. լիւրն 100 զուրուշն			
Մեծիտէյէ	108	Բուսիդ Բօլ	90
Քաաւրդ մէիտ	105	Նաքիլեան	87 20
Մանր մէիտ	103 20	Գրիմից	51 17
Մեթալիք	97 50	Անգլ. լիւր	110 6
Գոնապիսէ	26 37	Բ. Երկ. Փ. 123	541 2
Մանէթ թղթագրամ 8 30			

ԽՆԴՐԱՆԻ ՄԸ

Իմանալով որ՝ մեր պաշտօնակիցներէ ոմանք կը շարունակեն զրկել իրենց թերթերը «Ճաղիկ»-ի հին հրատարակչին անուն, կը խնդրուի իրենցմէ ուշադրութիւն դարձնել թերթիս նոր խմբագրատան հասցէին:

«Ծաղիկ»ի բաժանորդներէն Արշակ Էֆ. Չէլչեան հետեւեալ նամակը գրեալ է մեզ.

. . . Տէր,

Երէկ կամուրջէն Հայրճօղլու դայած միջոցիս սխալմամբ մէծիտիյէ մը աւելի ստակ տուած էի Ոսկեղջիւրի շողինաւներու տոմսակալաճառին. երկու ժամ ետքը վերադարձիս, եղելով թիւնը յայտնեցի կամուրջի պաշտօնեայ Ռիֆաթ ու Փամէնէնաա Էֆէնտիններու, որք խոստացան ինձ յաջորդ օրը երթալ և, եթէ տեսնուելիք հաշուէն երեւան երէք մէծիտիյէն, ես դարձնել ինձ:

Այսօր դացի և մէծիտիյէս երեւան ելած ըլլալով՝ առի:

Ուստի, հաճեցէք խնդրեմ հրապարակաւ շնորհակալեքս յայտնել յիշեալ երկու Էֆէնտիններուն իրենց ազնիւ ընթացքին և ուղղամտութեան համար:

20 Յունիս 1894

ԱՐՇԱԿ ՉԷԼՇԵԱՆ

Հ Ա Մ Պ Ո Ւ Ր Կ - Մ Ի Ի Ն Ի Ս

Մ Ի Ա Յ Ե Ա Լ

ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԲՆԱԵՐՈՒԹԻՒՆ ԲՆԳԳԷՄ ՀՐԻՆԸԻ

Դրամադրութիս	Ֆր.	8 000 000
Պահեստի դրամ	»	8 100 000
Տարեկան հատոյթ	»	19 532 000

Ընկերութիւնքս ՓՈՒԱԴԱՐՁ ԵՐԱՇ-ԽԱՌՈՐՈՒԹԵԱՄԻ կ'ապահովագրեն մթերանոցներ և բնակութիւններ, ասոնց մէջ դռնուած վաճառքներն ու կարասիները իրիտ չափաւոր սակագիրներով:

Լիազօր ներկայացուցիչ Կ. Պօլոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՈՒԱՆԱՍՈՒՐ

Պոլիս, Պահճէ-Գափու, Անանիոսի խան 12, 13, 14

ՏՕՐԹԷՕՈՒ ՊՅՅԱՆԵԱՆ

Մասնագէտ կանանց և ծննդամիջական գործարաններու հիւանդութեանց:

Կը դարմանէ ամեն տեսակ հիւանդութիւն՝ մանաւանդ իւր մասնագիտութեան վերաբերեալները:

Ամեն օր մինչեւ կէս օր հիւանդ կ'ընդունի իւր տունը, Բանկալթի, ճէպէլ փողոցի անկիւնը, Մէրթէպը Հարպիյէի հեծելարանի դիմացը, Թ. 133: Կէս օրէն վերջը կը գտնուի Պոլսոյ կողմը կամուրջի գլուխը, Բիւլէլիքեան դեղարանը: Ուրբաթ օրերը մինչեւ կէս օր իւր տունը և երկուշաբթի օրերը կէս օրէն վերջը յիշեալ դեղարանը իրեն դիմաց հիւանդները ձրիաբար կը դարմանէ:

ԱՍԸՐ ԲԻԻԹԻԿՈՒՄԵՆԻ ԼԻԲԵՍԵԼԻԵՐԻ. — Թուրք գրողներու գրքին ելած պատիկ պատիկ վէպեր են, ընտանեկան և օտար կեանքէ առնուած. մինչեւ ցարդ հրատարակուածներու թիւը կը հասնի տասն և մէկի: Առանձին տարածին կը ծախուին հաւաքած քսան, երեսուն, քառասուն և յիսուն փարսլի: Ամբողջին գինը 9 զրշ. կը բռնէ:

Ն Ո Ր Գ Ր Ք Ե Ր

ՄԱՐԴ ԸՆԴՈՒՄ ԻՋՏԵՐԻ ԿԱՄԻ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ յաջողեալ ճամբան. — Կարեւոր և օգտակար գիրք մըն է ամեն դասակարգի ամեն հասակի մարդոց մանաւանդ երիտասարդներու համար ընթերցելի: Ուրիշը՝ ԹԵՂԵՐԻ հետեւողութեամբ պատրաստած է զայն Ա. Կ. Սէք-լէման Էֆէնտի, տպագրութիւնն ու կազմն ալ խիստ գեղեցիկ ու ճաշակաւոր են: Բնորոշ քառթօնէ կազմ՝ 8, ոսկեգօծ և փառաւոր լաթակազմ՝ 12 ու կէս զրշ:

* * *

اصطلاحات ادبيه

ԸՍԹԸԼԱՆԱԹ ԷՏԵՊԵՅԷ. — Դարուս Ըամանցի առաջնակարգ գրողէա. բանաստեղծներէն հանգուցեալ Մուսալիմի Դաճիի այս ընտիր ու եղական հեղինակութիւնը կը յանձնարարենք Ըամանեան-գրական հասթեան բոլոր սիրահարներուն: Ազգին մանկաւոյն լաւ գիտութեամբ Ըամանեան լեզուի ուսուցիչները մասնաւոր պէտք չէ տեսնեն այս պարական աստղաւորը որ յստակ, սահուն և գիւրդմունքի ուժով մը պատրաստուած կու գայ անհրաժեշտ պէտք մը գոհացնել: Ըամանեան գրական-բանաստեղծութեան դասերու կարեւորագոյն պէտքը, որ զժողովրդար մեր վարժարաններու մէջ նկատողութեան անգամ տալու տալիս չէ:

Գինը 20 զրշ. է: Վարժարաններու համար գոհացուցիչ զեղշ ընել կը խոստանայ թերթիս հրատարակիչը:

* * *

ՄՈՒԱԼԼԻՄԻ ԳՐԱԼԻԹ. — Թուրքերէն ընթերցանութեան ընտիր գիրք մըն է, Միջագիւղի և Խազիւղի «Սիւննա իզզայէլիթ» ընկերութեան վարժարաններու Օսմ. լեզուի ուսուցչէն պատրաստուած. պարունակութիւնը հետաքրքրաշարժ և սիրուն է ունի նաեւ մանկանց միտքն ազնուացնելու ամեն յատկութիւն: Անհասկնալի բառերու քով գրուած են Գաղղիերէն և Թուրքերէն իմաստներն ամենապարզ բառերով: Գինը 3 զրշ. է:

ՄՕՏԷԼ. — Գաղղիերէն գեղագրութեան համար պատրաստուած տեսրակ մ'է. կը պարունակէ անկէզ, բօնու և կոթիկ գրերու ամեն տեսակներն. դրածածութիւնը ընդունուած է զամալան վարժարաններու մէջ: Գինը 60 փարսլի է:

Ն Ո Ր Ա Վ Է Պ Ք

Ա. ԳԱՅԷԴՆԵԱՆ ԷՓ. այս վերնագրով հրատարակած է տեսրակ մը որ կը պարունակէ ինն հրահանգիչ: գրօնէցիչ և հետաքրքրական վէպեր, հեղինակուած և թարգմանուած: Գինը 3 զրշ. է, և կը ծախուի բոլոր գրավաճառներու քով:

ՄԱՍՆԱՌՐ ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆ

«Խաղինէի Ֆիւնուն» թերթերէն շաբաթաթերթը ուղեւով օգտակար և դիւրամատչելի ընել Օսմաներէն գիտացող «Ծաղիկ»ի բաժանորդներուն տարեկան բաժնեգիրը փոխանակ 23ի իջեցուցած ենք:

ՄԻՄԻԱՅՆ 10 ՂՈՒՐՈՒՇԻ

Այս առթիւ տաւելող չենք համարիր ծանուցանել թէ՛ տպագրիկ բաժանորդագրութիւն — մանաւանդ գաւառներու համար — երբեք չպիտի կրնանք ընդունիլ, քանի որ թէ «Ծաղիկ»ի և թէ «Խաղինէի Ֆիւնուն»ի բաժնեգիրները կարեւոր դուստր մը չեն կաղմբ և երկար բարակ հաշիւ բռնելը չարժեք:

ՄԵՐ ԲԱՃԱՆՈՐԳՆԵՐՈՒՆ

Ծաղիկի բաժանորդներու դարձատանց աղղարարութիւնները՝ տասը տողէն աւելի չըլլալու պայմանաւ՝ մէկ մէկ անգամ պիտի հրատարակուին թերթիս աղղարարութեանց բաժնին մէջ առանց վարձքի: Ուստի կը խնդրուի Ծաղիկի բաժանորդներէն ժամ առաջ զրկել իրենց այդ կարգի աղղարարութիւններն:

ԱՐՏՈՆԱՏԷՐ Ա. ՍԱԲԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐ. «ՄԱՂԻԿ» ԼՐԱԳՐՈՅ



Կ. Պոլիս, Խաչմուտ փաշա Զօրազճի խանի կարգը թիւ 64

Ն Ո Ր Վ Ա Ջ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն Ը Ն Տ Ի Ր Թ Է Յ Ի

Մեր վաճառատունը, որ ուղղակի Չինաստանէ և ճապոնէ բերել սրուած ընտիր թէյերու կեղրոն մըն է, թէ իր թէյերու աղեկութեամբ և թէ զիններուն անհամեմատ ածանութեամբ քիչ ատենուան մէջ թէյատէրներու մեծ քաջալերութեան արժանացած է. ամեն անոնք որ կը յաւիտագին ընտիր և միանգամայն ածան թէյ գնել, թող հաճին այցելել մեր վաճառատունը. անգամուան մը փորձը մեղք չէ:

Մեր վաճառատան մէջ կը գտնուին նաեւ ուսուսկան ընտիր սամալարներ. թէյատմաններ են. են. միշտ ընտիր, միշտ ածան:

ԱՋԳ. — Կեղծերէն զգուշաւորը համար կ'աղաչենք որ ամեն տաւփերու վրայ մեր վերոգրեալ մարգան գրտու էք: